ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ պարտատոմսերի 20-րդ թողարկում

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի պարտատոմսերի 20-րդ թողարկման հիմնական պայմանները.	
Արժեթղթերի դասը	Անվանական արժեկտրոնային
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	25 ԱՄՆ դոլար
Պարտատոմսերի քանակը	120 000 հատ
Թողարկման ընդհանուր ծավալ	3 000 000 ԱՄՆ դոլար
Արժեկտրոնային տոկոսադրույք	Տարեկան 5.5%, որը կհաշվարկվի տեղաբաշխման առաջին օրվանից սկսած
Արժեկտրոնների վճարում	Եռամսյակային վճարումների պարբերականությամբ
Շրջանառության ժամկետ	51 ամիս
Տեղաբաշխման ժամկետ	19/06/2019թ.-19/08/2019թ.
Տեղեկացնում ենք, որ պարտատոմսերի թողարկման ծրագրային ազդագիրը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից 24/05/2019թ.:	
Կորպորատիվ պարտատոմսերը կարող եք ձեռք բերել 19/06/2019թ.-ից մինչև 19/08/2019թ.-ը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի Գլխավոր գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ ցուցակումից սկսած դրանք շրջանառվելու են երկրորդային շուկայում, մասնավորապես՝ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ առևտրային հարթակում:	
Պարտատոմսերը ձեռք բերելու համար անհրաժեշտ է արժեթղթերի հաշիվ ունենալ կամ բացել «Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ –ի կողմից հաշվի օպերատորի կարգավիճակ ստացած ընկերություններում և բանկային հաշիվներ՝ ՀՀ տարածքում գործող ցանկացած բանկում: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ հանդիսանում է հաշվի օպերատոր, հետևաբար պահանջվող բոլոր հաշիվները հնարավոր է բացել հենց ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ում՝ անվճար և առանց սպասարկման վճարի՝ պարտատոմսի գործողության ընթացքում: Կատարելով ներդրում կորպորատիվ պարտատոմսերում՝ Դուք կարող եք շրջանառության ընթացքում ցանկացած պահի դրանք վաճառել և շուկայական տոկոսադրույքների կտրուկ տատանումների բացակայության	

պայմաններում ստանալ ինչպես ներդրված գումարն, այնպես էլ կուտակված տոկոսագումարները:
«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, Բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերում ներդրված միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ և երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից:
Պարտատոմսերի մարման ամսաթիվ՝ 19.09.2023թ.

Ծանուցում.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 20-րդ թողարկման պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտների վճարումը և պարտատոմսերի մարումը կիրականացվի հետևյալ ժամանակացույցով	
Արժեկտրոնային եկամուտների 1-ին վճարում	19.09.2019թ.
Արժեկտրոնային եկամուտների 2-րդ վճարում	19.12.2019թ.
Արժեկտրոնային եկամուտների 3-րդ վճարում	19.03.2020թ.
Արժեկտրոնային եկամուտների 4-րդ վճարում	19.06.2020թ.
Արժեկտրոնային եկամուտների 5-րդ վճարում	19.09.2020թ.
Արժեկտրոնային եկամուտների 6-րդ վճարում	19.12.2020թ.
Արժեկտրոնային եկամուտների 7-րդ վճարում	19.03.2021թ.
Արժեկտրոնային եկամուտների 8-րդ վճարում	19.06.2021թ.
Արժեկտրոնային եկամուտների 9-րդ վճարում	19.09.2021թ.
Արժեկտրոնային եկամուտների 10-րդ վճարում	19.12.2021թ.
Արժեկտրոնային եկամուտների 11-րդ վճարում	19.03.2022թ.
Արժեկտրոնային եկամուտների 12-րդ վճարում	19.06.2022թ.
Արժեկտրոնային եկամուտների 13-րդ վճարում	19.09.2022թ.
Արժեկտրոնային եկամուտների 14-րդ վճարում	19.12.2022թ.
Արժեկտրոնային եկամուտների 15-րդ վճարում	19.03.2023թ.
Արժեկտրոնային եկամուտների 16-րդ վճարում	19.06.2023թ.
Արժեկտրոնային եկամուտների 17-րդ վճարում և պարտատոմսերի մարում	19.09.2023թ.

Այն դեպքում, երբ արժեկտրոնային եկամուտների վճարման կամ պարտատոմսերի մարման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, վճարումը կատարվում է հաջորդ աշխատանքային օրը:
Արժեկտրոնային եկամտի վճարման, ինչպես նաև մարման գումարի փոխանցումը կատարվելու է ՀԿԴ-ից ստացված սեփականատերերի ռեեստրից քաղվածքում նշված հաճախորդի հաշվին՝ պարտատոմսերի արժեկտրոնային եկամտի վճարման, ինչպես նաև մարման օրվա մինչև ժամը 14:00-ն: Արժեկտրոնային եկամուտը, ինչպես նաև մարման գումարը վճարվում են վճարման օրվանը նախորդող աշխատանքային օրվա ժամը 24:00-ի դրությամբ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ում, պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի (ռեեստրի) հիման վրա, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ում կամ այլ բանկերում պարտատոմսերի սեփականատերերի բանկային հաշիվներին:
Պարտատոմսերի և Բանկի մասին առավել մանրամասն տեղեկատվություն կարող եք ստանալ ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցված Պարտատոմսերի թողարկման ծրագրային ազդագրում և թողարկման վերջնական պայմաններում: